

Կրթություն

Մարզում գործում են մարզպետարանի ենթակայության 90 հանրակրթական ուսումնական հաստատություններ.

59-ը՝ միջնակարգ, 30-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /օժանդակ/

ԿԳ նախարարության ենթակայության 12 հանրակրթական ուսումնական հաստատություններ.

11 ավագ դպրոց, 1 կրթահամալիր /Աբովյանի կրթահամալիր /

6 պետական քոլեջ, 4 արհեստագործական ուսումնարան

1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն /Հրազդանի հումանիտար ինստիտուտ/:

2018-2019 ուսումնական տարում մարզի ուսումնական հաստատություններում սովորում են 37165 աշակերտներ, իսկ առաջին դասարան են հաճախում 3769 աշակերտներ:

Մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 3000 ուսուցիչներ: Այս ուսումնական տարում ծանրաբեռնվածությունը մի փոքր բարձրացել է և կազմել է շուրջ 16 ժամ/օտար լեզուների կիսվող դասաժամերի հաշվին /: Միջին դրույքաչափը /22 դասաժամ / մարզում կազմել է 123 հազար դրամ:

Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը կազմել է 1:12,3-ի, իսկ դասարանի միջին խտությունը՝ 22 աշակերտ:

2018 թվականին որակավորման առաջին աստիճանի տարակարգ է ստացել 56 ուսուցիչ, իսկ երկրորդ աստիճանի՝ 5 ուսուցիչ:

2018 թվականին վերապատրաստվել և ատեստավորվել են մարզային ենթակայության 88 դպրոցների 469 ուսուցիչներ:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններից հիմնանորոգված են 38-ը, մասնակի՝ 27-ը, իսկ մնացած 26-ը վերանորոգման կարիք ունեն:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում լոկալ ջեռուցմամբ ապահովված են 90 դպրոցներից 72-ը, իսկ 18-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով և վառարաններով: Այս ձևոան նախաշեմին ավարտվել է Գառնի բանավանի հիմնական դպրոցի ջեռուցման համակարգի աշխատանքները, իսկ Նոր Արտամետի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի շինարարական աշխատանքները ընթացքի մեջ է:

Մարզում գործում են 53 նախադպրոցական հաստատություններ, որոնցից 25-ը հիմնովին վերանորոգված են: <<Հայաստանի գյուղական համայնքներում

նախադպրոցական խնդրի լուծման նորարարական ձև>> ծրագրի շրջանակներում <<Մոբայլ մանկապարտեզ>>-ներով նախադպրոցական կրթություն է սկսվել իրականացվել Ջրաբերի և Նուռնուսի համայնքներում:

2018-2019 ուսումնական տարում ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրով մարզի 37 դպրոցներում վերանորոգվել և կահավորվել են ճաշարաններ և արդեն 83 դպրոցների շուրջ 14000 տարրական դասարանների աշակերտներն ապահովվել են ամենօրյա տաք սննդով: Չարենցավանի N6 հիմնական և Քաղսիի միջնակարգ դպրոցների խոհանոցներն ամբողջությամբ նոր գույքով կահավորվել են ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրով:

2018 թվականին տեղի է ունեցել 190 ուսուցչի թափուր տեղի մրցույթ, սակայն որոշ առարկաների գծով /ինֆորմատիկա, տեխնոլոգիա, կերպարվեստ, գերմաներեն, երգերաժշտություն, ֆիզկուլտուրա/ մրցույթներում մասնակիցներ չեն լինում: Այս տարի նշանակվել են աշխատանքի 93 ուսուցիչներ:

2018 թվականին տեղի է ունեցել 16 տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթ և բոլորը համալրվել են:

Դպրոցները ակտիվորեն համագործակցում են ԲՈՒՀ-երի, հասարակական կազմակերպությունների /dasar.am, imdproc.am, Արմաթ հիմնական լաբարատորիա,/, միջազգային կառույցների հետ /ՄԱԿ, Բրիտանական խորհուրդ, ՅՈՒՆԵՍԿՕ, Վորլդ Վիժն, Պատանեկան նվաճումներ և այլն/, որի արդյունքում իրականացվել են մի շարք ծրագրեր: Ամբողջությամբ գործում են դպրոցական կայքէջերը: